

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրության մէջ:

Օտարաբաղադրացիք գինում են ուղղակի:
Тифлис. Редакция „Искусство“

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւններէ համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Երբ կը մտածենք թատրոնի մասին, — Ներքին տեսութիւնը: Նամակ Հին-Բայազէթից: Նամակ Ղարսից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: — Արտաքին տեսութիւնը: Գերմանիա: Աւստրո-Ունգարիա: Արտաքին լուրեր: — Խառն լուրեր: — «Մշակի» հեռագիրներ: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց:

ԵՐԲ ԿԸ ՄՏԱԾԵՆՔ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի ռուսաց դերասանական խումբը օրից օր կազմակերպվում է և բազմանում է: Ներկայացումները շնորհով ընդունակ դերասանութիւնների և դերասանների շատ աջող են լինում: Թատրոնը գրեթէ միշտ լի է լինում, որովհետեւ անդադար նոր և ընտիր պիեսներ են տրվում և ժամանակ առ ժամանակ գալիս են նոր դերասաններ և նոր դերասանութիւններ:

Բայց եթէ ուշադրութեամբ նայենք թէ ովքեր են թատրոնի այցելողները, կը համոզվենք որ մեծամասնութիւնը ռուսներ են, իսկ տեղացի հասարակութիւնը շատ քիչ է յաճախում պ. Պալմի ներկայացումները:

Մեր հայոց հասարակութեան մեծ մասը դեռ ևս այն աստիճան չէ տիրապետում ռուսաց լեզուն, որ ռուսաց թատրոնը նրա համար պահանջ կարող էր դառնալ: Բացի սորանից թատրոնը առ հասարակ դեռ ևս կենսական պահանջ չէ հայերի համար, ինչպէս և լրագրութիւնը, գրականութիւնը և ուսումը մեր ազգի մեծ մասի համար դեռ ևս պահանջ չեն:

Հայը նայում է թատրոնի վրա ինչպէս շապուկեան, կամ զուարճութեան վրա: Հարաւոր մի անգամ, կիրակի օրը միայն դուք կը տեսնէք մի քանի հայ երիտասարդներին թատրոնի դահլիճում:

Երբ որ հայոց ոչ մի լրագիր չը կար Ներկայացում, ամէնքը համոզված էին որ հայոց լրագրութիւնը չէ կարող գոյութիւն ունենալ: Բայց փոքր առ փոքր սովորեցնելով հայերին կարգաւ լրա-

գիրը իրանց մայրենի լեզուով, նախ շարաւթը մի անգամ, յետոյ երկու անգամ, մենք կարողացանք իրագործել և ամենօրեայ հայոց թերթ, կարողացանք հասցնել մեր բաժանորդներին թիւը ինն հարիւրի (էլ չենք խօսում կարգացողների թւի մասին, որոնք այդ թւից երեք չորս անգամ աւելի են), կարողացանք հայոց հասարակութեան գոնէ մի յայտնի մասի համար լրագրի ընթերցանութիւնը պահանջ դարձնել:

Նշուիտ պէտք է առաջ տանք և հայոց թատրոնի գործը:

Բաւական է սկզբից եթէ հայոց ներկայացումները շարաւթը մի անգամ լինէին, այն է կիրակի օրերը:

Բայց որ թատրոնը աջողութիւն ունենայ, հարկաւոր են երեք զլխաւոր պայմանները՝ նախ սեփական դահլիճ, երկրորդ պիեսաների նոր րէպերտուար և երրորդ դերասանների և դերասանութիւնների թարմ ոյժեր, որոնց աշխատանքը վարձատրված լինէր հաստատ ռոճիկով:

Ի հարկէ հարկաւոր է թատրոնի հետ միասին իրագործել և թատրոնական ուսումնարան, որ կարող էր ընծայել մեր բեմին միշտ նոր խաղացողներին, որպէս զի թատրոնն էլ, որ միշտ պահանջում է նոր ոյժերի գործակցութիւնը, մեր ուսումնարաններից շատերի պէս չը դառնայ մի քանի մարդիկների սեփականութիւն, չը դառնայ նոյնպէս մի անկեղծանոց:

Երբ որ այդ տեսակ ձեռնարկութիւն գլուխ կը գայ, երբ հայոց թատրոնը կը զգայ իրան անկախ, այն ժամանակ կը յայտնվեն և բեմական նոր գործեր:

Երբ որ հայի համար շարաւթ մի անգամ թատրոն գնալը պահանջ կը դառնայ, այն ժամանակ կարելի է սկսել ներկայացումներ տալ և շարաւթը երկու, երեք անգամ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ԲԱՅԱԶԷԹԻՑ

14 օգոստոսի

«Մշակ» լրագրի № 133 ստացայ երէկ առաւօտեան, յատկապէս այն ժամանակ, երբ հրաւիրելով ինձ մօտ մի երկու պատուաւոր բայազէթիներին և մի քանիսի կարգում էի նրանց մօտ ձեր պատուական լրագրի № 132 առաջնորդ յօդուածը, ուրեմն 133 համարը շատ յարմարաւոր ժամանակ ինձ հասաւ, որովհետեւ ձեր ինձ վրա դրած սուրբ պարտաւորութիւնը վերստին յիշած առաջնորդ յօդուածի վրա ժողովրդների ուշադրութիւնը դարձնելու մասին, մեծ կարեւորութիւն տուեց նոյն յօդուածին և բայազէթիք հասկանալով, որ գաղթականութեանը, հակառակ է ընդհանուր ազգը, որ այդ գաղթի արդիւնք էր, որ անելի մեծ ապաւորութիւն գործեց նրանց վրա քան իմ քարոզը: Ձեր խօստացած տաճար օրինակ 132 համարից դեռ ևս չեմ ստացել և ստանալու պէս անպապաղ կը կատարեմ ձեր պատուէրը, որ և իմ օրտի ցանկութիւնն է: Եւրաթի օր Բայազէթում մի ժողով կազմեցին, ուր հարց բարձրացրին հարկաւոր է գաղթել թէ ոչ և ուր գաղթել: Ժողովը վճռեց գաղթել Ղարսի սահմանը և այդ վճռին կատարումն տալու համար ուղարկել պատգամաւորներ Նրեանի գորաբանակի հրամանատար գեներալ Կամարովի մօտ: Այս ժողովից մի քանի օր առաջ Բայազէթի ժողովուրդը դիմեց Էրզրումի արքեպիսկոպոսին հարցնելով նրա խորհուրդը գաղթել թէ ոչ: Այս հարցին դեռ ևս պատասխան չէ ստացվել և դուցէ մինչև այս պատասխանը չը ստանան բայազէթից չեն դիմի պ. Կամարովին: Առաջ քան թէ կը հաղորդէի ձեզ, թէ բայազէթից վճռողականապէս և բոլորեքսան գաղթելու են, թէ ոչ, ևս հարկաւոր եմ համարում ծանօթացնել ձեզ այն շարժառիթին հետ, որ ստիպում է այստեղացի հայերին թողնել իրանց տուն ու տեղը և ենթարկել իրանց գաղթականութեան դառն հետեանքին, չենք ասում Հայաստանի աւերելուն, որի վրա նա գաղափար չունի: Այո, բայազէթից անելի բարոյականապէս ընկած են, քան թէ նրկաւ պէս (զրա համար մի ուրիշ անգամ), որի առհաւատեան արդէն ունենք և որը իմանալու անուշտ հետաքրքիր կը լինէր: Գուցէ կը կարծէք, որ այստեղացի հայը անբաւական է տաճկական կառավարութեանը, ոչ երբէք, դուցէ կը կարծէք, որ հայը երկիւղ է կրում չրջապատող քուրդ ազգաբնակչութեան հարստահարութիւններից, այդ ևս ոչ և ոչ, ընդհակառակն հայն միշտ օգուտ քաղելով քրդի միամտութենից ինքն է հարստահարել նրան վաճառականական ճարտիկութեամբ և քուրդը միշտ տեղացի հային իբր հարստութեան աղբիւր է ծառայել, բայց առնելով պատերազմական ժամանակում պատահած յափշտակութիւնը, որ հետեանք է, գոնէ այստեղի քրդերի վերաբերմամբ, մահմետական ֆանատիկութեան, և որ երբէք տեղի չը պիտի ունենար, եթէ չը լինէր Եփեսոս Զեւլալէի դիմ իր անխառն և մոլեռանդ պրօվոկացիայով, իր հրաւերով կոտորել և կողոպտել գեաւուրները, և այդ բանում ևս հայերը իրանք են մեղաւոր, որովհետեւ սիրտ առնելով ռուսաց Բայազէթ գաւառից, բաւականին վատ են յարաբերվել տեղիս թիւրքերի հետ: Վերջապէս ինչպէս է կայանում հայի գաղթականութեան բուն պատճառը, անուշտ կը շտապէք հարցնել: Այստեղի հայը իր գաղթելու գլխաւոր պատճառը առաջ է բերում իր դրացի տաճիկների վրէժնորդութիւնը, որ նա սպասում է, բայց իմ կարծիքով անհիմն է և միայն անմիտ երկիւղով առաջացած և երեւակայութեան մէջ յղացած ցնորք է, որ հետեւում է նրանց: Բայազէթից տաճիկները յափշտակելով հայի կայքը և կարողութիւնը անցան մասամբ Պարսկաստանի և մասամբ Վանի կղզ-

մերը, ինչպէս այդ յայտնի է ձեզ ուրիշ նամակներից, թողնելով իրանց տները յաղթողի ձեռքը: Մեր գործը և մասամբ հայերը անցեալ ձմեռ զեռնգվելով Բայազէթի չրջանում և վառելիքի մեծ հարկաւորութիւն զգալով, փախած թիւրքերի տները քանդելով փայտը վառելիքի տեղ գործ դրեց: Ահա և հայերը կարծում են, որ այդ թիւրքերը, որոնք անուշտ քաղաքը ճանկատանի կառավարութեանը յանձնեցուց յետոյ պէտք է վերադառնան և իրանց տները քանդելու վրէժը հայերից առնեն, թէ յայտնապէս և ծածկապէս, սակայն մեզ հաստատ աղբիւրից յայտնի է, որ ընդհակառակը այդ տաճիկները իրանք երկիւղ են կրում հայերից, որ սրանք դատ չը բանան կառավարութեան առաջ և ամեն ջանքի գործ են դնում նպատաւոր լինել հայերի գաղթելուն զանազան սպառնալիքներով, որպէս զի յետոյ սրանցից առած աւարը հանդարտութեամբ սըրանց տներում իսկ վայելեն: Սակայն հայերի մէջ կան մարդիկ, որոնք այս ամենը հասկանում են և չեն ցանկանում գաղթել, բայց սրանք զգալիորէն շատ աննշան են թւում: Այս բայազէթիցներին խորհուրդ տուի զիմով պատրիարքարանի միջնորդութեամբ Օսմանեան կառավարութեանը խնդրելով, որ դատաստանի ենթարկի յանցաւոր տաճիկներին, և արգելէ նրանց վերադառնալ Բայազէթ, որովհետեւ մի և նոյն է, նրանցից ոչ մէկը Բայազէթում այժմ տուն չունի և ստիպված են ուր և լինի նոր բնակութեան տեղեր չլինել: Այս խորհուրդը ըստ երեւոյթին հաւանութիւն գտաւ ժողովրդի մէջ և մի քանի քուրդ և թիւրք ազգեցութիւն ունեցող և հայերին բարեկամ անձինք ևս հաւանութիւն տուին հետեւ իմ այս խորհրդին, խօստանալով իրանց օգնութիւնը: Եւ եթէ աղաները չը գաղթեն, ժողովուրդը բողբոլին չի գաղթի: Բայց բանն այն է, որ աղաների համար մի և նոյն է, նրանք փող ունեն և կարող են այդ փողը հանգիստ վայելել Ռուսաստանում, այն ինչ ժողովուրդը հայ և մաշ պէտք է լինի, մինչև որ իր համար տուն և ուրիշ առաջին պիտոյքի հարկաւորութիւնը պատրաստէ: Բայազէթ չրջանի տասը հայ զիւղերից միայն մէկը, Մուսուհի գիւղը, որի մօտ այժմ գտնվում է Նրեանի գորաբանի բանակատեղը, բացարձակ յայտնեց, որ նա ցանկաւ կ'ուզէ չունի գաղթելու: Միւս գիւղերից առ այժմ տեղեկութիւն չունեմ: Մի քանիսից, որ միակ մարդն է ամբողջ Բայազէթի չրջանում, որ հասկացողութիւն ունի ազգութեան վրա, բայց վատաբաղդաբար շատ աղքատ է, պատրաստ է գնալ չրջակայ գիւղերը հասկացնելու գաղթականութեան դառն հետեանքը, մեր ապագայ յոյսը, և համոզել ժողովրդին չը գաղթել: Բայց մի մարդ, որ բայազէթիցիների մէջ բաւականին մեծ նշանակութիւն ունի, յափշտակվելով գաղթականութեամբ, յոյսը դնելով իր 5 000 ռուբլ կարողութեան վրա, արգելեց քահանային անելով «Չանաղամ ազգութեան ապագան, իմ մահից յետոյ թէկուզ ազգն էլ կործանվի» և զրգուտ է ժողովրդին գաղթել: Նա կարծում է որ Ռուսաստանում նրա համար տուն, տեղ, հարստութիւն և զանազան պարգևներ են սպասում: Այս մարդն է Մարգար աղա Դանելեանը. ժողովուրդը ակամայ կարծես համաձայնում է հետեւել նրան: Այս այսօր գրեցի Ս. Օհանյանի վանքի վանահայր Զովհաննէս վարդապետին ուղարկելով և «Մշակ» № 2, որ իր ազգեցութիւնը գործ դնէ գաղթականութեան, առաջն առնելու. նա համաձայն է իմ խորհրդին, Սա մի հասկացող և ժողովրդասէր անձն է, բայց նա ևս տագնապի մէջ է վրէժնորդութիւն սպասելով քրդերի կողմից Ս. Օհանյանի վանքում պատահած մի անխառն եղեռնագործութեան պատճառով, որի համար հարեանցի կերպով յիշված է ձեր լրագրի Գլխաւորի ճառապարհորդութեան մէջ: Որի մանրամասնութիւնը թողնում եմ մի աւելի յարմարաւոր ժամանակի նամակով հաղորդել ձեզ: Առ այժմ Ալաշիրտից միայն այս կը հաղորդեմ, որ նրանք բոլորեքսան անբաւական են իրանց այժմեան չրջանապետից: Նրանք անբաւական լինելու կատարեալ իրաւունք ու-

նեն, Ալաշկերտցիք իս գաղթելու ցանկութիւն են յայտնել և արդէն պատգամաւորները ներկայացան գեներալ Կամարովին: Այդ չըջանից երեք գիւղ միայն չեն ցանկանում գաղթել: Սրանք ինչպէս և Մուստաք խմբաւոր-վաշայի արշաւանքի ժամանակ միւս գաղթականների հետ չէին անցել մեր կողմը և այժմ համեմատաբար, և մինչև անդամ չստ լաւ են իրանց դրացի գաղթականներից նիւթակաւապէս: Նամակաւ արդէն աւարտում էի, որ ստացանք պաշտօնական թուղթ, որ ամսին 25-ին մեր գործերը հեռանում են Բայազէթի սանջակից: այդ հրամանագրով մեզ յանձնել էին յայտնել այդ մասին նրանց, որոնք գաղթելու ցանկութիւն ունեն: Հրամանագրով պատուիրած է ոչ ստիպել և ոչ արգելել գաղթականութիւնը, ընտրութեան կատարելով իրաւունք տալով ժողովրդին: առ այժմ կարծես ցանկացողներ չը կան, բայց մեծ տաղանայի և յուզման մէջ է ժողովուրդը: Կարծելով, որ մենք չը պէտք է սպասենք թիւրքաց պաշտօնական անձանց այստեղ գալուն և քաղաքը ընդունելուն, որովհետև դրա համար ոչինչ պաշտօնական և մասնաւոր տեղեկութիւն չունենք, առանձին մարդ ուղարկեցին Ս. Օհանյան վանքը հրաւիրելով Յովհաննէս վարդապետին գալ այստեղ, խորհել և միջոցներ որոնել և առաջն առնել այն վտանգի որ գոցէ սպառնում է հայերին ուստաց գործերի անմիջապէս հեռանալուց յետոյ: Յոյս ունեւ որ հայերը պատշով կը մնան յայտնի Միջոց աղայի նովանաւորութեան ներքոյ, մինչև թիւրքաց կառավարութեան այստեղ հաստատուելը:

Ուղիղ երեկոյեան ժամին ինն էր, երբ Մշակի 144 և 145 №№ կարգաւորուց յետոյ, յանկարծ աչքերս, կարծես անդիտակցաբար, ուղղեցի դէպի լուսամուտը: Հեռու, ուղղակի հորիզոնի վրա նկատեցի զանազան տեղերում բոսորազոյն բծեր: Այդ բծերը եւ նրաւայէս կարծեցի, թէ կը լինեն գաղթական փրկողների վրանների կրակը, բայց համոզվելով, որ իմ աչքերս ընդունակ չեն այդ մեծ տարածութեան մէջ տեսնել փրկողների վրանները փոքրիկ խարոյկները, փոխեցի այդ մասին կարծիքս, համարելով որ կորուստ լուսնի ստորոտներն են այրվում գաղթականների անդադնութեամբ թողած կրակներից, արդէն չորացած բուսեղէնների մէջ հորդեհ ընկնելով: Այս բաւականին հաւատալի թվաց ինձ, որովհետև այդպիսի մի քանի դէպքեր պատահեցան Բայազէթը չըջապատող բլուրներում եւս: Սակայն զիմուրդում եմ անխոցելի լինելու և համոզվում եմ, որ այդ կարծիքը եւս մասամբ սխալ է և տեսնում եմ, բացի ինձանից այդ երևոյթով հետաքրքրված են և իմ դրացի բնիկները: Սակայն նկատում եմ, որ դրացիքս զանազան հաւաքանք և հոգոցներ են հանում, վերջապէս համաբերութեամբ սահմանը լրացաւ և ես կոչելով ծառայիս, հարցնում եմ նրանից, «այդ ինչ կրակներ են, որ երևում են Գիւղիկին և Ս. Օհանյան վանքի ուղղութեամբ», «Աղա, լսում եմ պատասխան, էդ վանքի բովի գիւղերի բարդերը և աներն են երկուսը, գիւղացիք ընկնելով ուր հողը, իրանց տուն ու տեղը, արտն ու խոտը կրակում են, որ քրդերը չը տիրեն նրանց և էդ քրդերները միայն (այժմ) Մուստաքն են ատրեալի քով: Այժմ, երբ ես ճշդութեամբ իմացայ հորիզոնի վրա փայլող բծերի ինչ լինելը, կարծես աչքերս էլ ստացան մի ուժեղ լուստ: որովհետև և պարզ որոշում եմ, ահա այն սարի մօտի հրդեհը, դէպի աջ, Գիւղիկին ետև Գարաբազան է, իսկ միւսը Ղոււմի Պուճախն է և այլն: Այս, որ անցեալ տարի յուլիսին վաղարշապատում տեսնում էի գաղթականներին, կարգացած էի նրանց ընտանեկան ցուցակը, մասնաւորապէս լսում էի նրանց կրած նեղութիւնները, ես որ ուղիղ տասն օր սորանից առաջ, տեղանտես էի սուգ ու չիվանիս, կոծ ու լացին, որ անում էին բայազէթից, երբ ուղարկելով իրանց պատգամաւորներին Ղարս իրանց համար տեղ գտնելու համար, պատրաստվում էին գաղթել, իսկ այժմ, թէև մի քանի տասնեակ վերստ հեռաւորութեամբ, տեսնում եմ հայերի տները, նրանց այդ սրբազան օջախները, նրանց արտերը, իրանց ձեռքով պատրաստած հրդեհի բոցը և ծովը դէպի վեր երկինքը բարձրաւալը, երեսակայելով այն տաղանայը և յուզմունքը, վիշտը և կակիճը, որ այդ բոպէին կրում էր յուսահատ հայ գաղթականը, չէի կարող անտարբեր աչքով նայել թշուառ իրողութեանը, բայց օգնելու անձեռնհաս լինելով, դատապարտվեցի լընութեան, միայն ինքը ինձ մօտաւորապէս հարցնում եմ «ուրեմն գործ դրած միջոցները, վարդապետի քարոզները ոչինչ ազդեցութիւն չու-

նեցան հայերի վրա», երևի «ոչ»: հետեցրի պատասխանը, բայց միթէ ամբողջ Բայազէթի սանջակի հայ գիւղացիք գաղթում են, այդ հարցին ոչ ոք չը պատասխանեց հաւաստի տեղեկութիւն չունենալով այդ մասին: Այս ևս ոչինչ տեղեկութիւն չունենալով այդ հարցին բաւականացուցիչ պատասխան տալու սիրելի ընթերցողներին, առ այժմ յայտնում եմ որ բայազէթցիք և երեք գիւղ բլուրովին հրաժարել են իրանց գաղթելու ցանկութիւնից:

ՆԱՄՄԱԿ ՂԱՐՍԻՑ

4 սեպտեմբերի

Էրզրումի և նրա շրջակայ գիւղերի հայ աղ-գաւթականութիւնը մեծ տարաքի մէջ են ուստաց հեռանալու և տաճկաց մոլեռանդ կատաղութեան մասին:

Տաճիկները կամենում են դէպի ուստները ունեցած իրանց ատելութեան վրէժը հայերից առնել:

Դեռ Էրզրումի սահմանից ուստաց զօրքը դուրս չեկած, այն ինչ շրջակայ գիւղերից մի պօլկ կաղանկներ դուրս են գալիս դէպի Ղարս գալու, տաճիկները մի խումբ ձիաւորներ յարձակվում են խօսք վրան գիւղի վրա տանուէր մինչև սպանում են և նրա կինը տանում են:

Մի և նոյն օրը Տալիպապա գիւղի սահման-կից տաճիկները յարձակվելով Տալիպապա գիւղի նախկին վրա յաղթանակում են խեղճ հայերի մա-բերը—կողերը և տանում:

Հետեւեալ օրը մոլեռանդ և վրէժնորութեան կոյր կրքով լցված մուսուլմանները մտնում են ձիւնի գիւղը, գիւղի քահանային սարսափելի կերպով ձեռնելով վայր են դնում, պառկեցնում են և նրա միւրքը ամբողջով նրա կինը պղծում և աղջիկը փախցնում են:

Այս սարսափելի լուրերը լսելով միւս հայ գիւղացիները զարհուրանքի մէջ ընկած չը գիտեն ինչ անեն և ում դիմեն: Նրանցից շատերը ուղարկել են պատգամաւորներ այս և այն կողմը, որը դէպի Էրզրում որը Ղարս և այլ տեղեր:

Այդ գիւղերի պատգամաւորներին ես անձամբ տեսայ Ղարսի մէջ և լսեցի նրանցից վերադի-չեալները, որոնք եկած էին տեղիս արժանապատիւ առաջնորդի մօտ, նրա օգնութիւնը և խորհուրդը խնդրելու:

Ինչպէս լսեցինք հայր Գրիգորիսը նրանց յորդորել է մի քանի ժամանակ համբերել, իրանց արտերը կասել, ցորեանները ժողովել և ձեռնալայ պաշար և աղբիւր ապահովութիւն ձեռք բե-րելուց յետոյ մտածել գաղթականութեան վրա: նա ամեն հողով աշխատում է առաջն առնել կորստական գաղթականութեանը:

Նորին արժանապատւութիւնը իր կողմից, կարծեմ, գրած է վեհափառ Կաթողիկոսին հնար գտնել աւերիչ գաղթականութեան առաջն առ-նելու և միջնորդելու ուստաց Ողորմած կառա-վարութեան իմէ հնար է զօրաց մի մասը թող-նել Էրզրումի սահմանում մինչև մի կարգադրու-թիւն և ապահովութեան հնարք լինի անտէր հայ ազգին:

Այս մասին գրած է նոյնպէս, ասում են, Պօլ-սի պատրիարքարան, չուտափոյթ հոգացողու-թիւն և կարգադրութիւն անել ահաբեկված հայ ազգաբնակչութեան մի տեղեկութիւն և ապահո-վութեան յոյս և միջոց հասցնելով, մասնաւորա-բայազէթի և Ալաշկերտի ազգաբնակչութեան մի վերջնական պատասխան հասցնել նրանց պա-հանջած հարցերին: Որդեօք ազգային պատրիար-քարանը նրանց ապահովութեան համար մի կարգադրութիւն անելու է, իմէ ոչ, նոքա շու-տով գաղթելու են:

ՆԱՄՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երևան, 30 օգոստոսի

Կարդալով «Մշակի» 146 համարում երևանցու օրերը Ն. Տ. Գ-ի վերաբերութեամբ տուած պատասխանը, շատ ուրախացայ որ պաշտպան էք հանդիսանում ճշմարտութեան, ուստի սե-պուճ և անհրաժեշտ պարտականութիւն եմ հա-մարում պաշտպանել ձեզ հետ ճշմարտութեան կապերը: Կոնդեցիք որոնցից մինն էլ ես եմ,

վարժուհի Հ. Տ. Գ-ից շատ գոհ եմ, որ նա կարճ միջոցում չափազանց կրթել է օրիորդներին թէ ուսման ասպարիզի ընթացքում և թէ պարկեշ-տութեան չըջանում: մյուս բանիւ գովելի է օր. Տ. Գ-ի ուսուցանելու մեթոդը և նրա գովանի վարուց բարուց կողմանէ դուք էլ կը վկայէք, ինչպէս և բացատրել էք վերոյիշեալ համա-րումը Այդ վարժուհու պարկեշտասուն վարուց բարուց օրինակները յայտնի են թէ երևանցի-ներին և թէ ուրիշներին:

Կոնդեցիք բոլորովին բաւական են իրանց վարժուհուց և այս վերջինն էլ նրանցից:

Հերակլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք ստացանք ԹԻՖԼԻՍԻՍԻՄ բնակվող զըն-դապետ Զաքար Շա հաղիղեալից 14 հատ հայոց գրքեր յօդուտ վան քաղաքի «Արարա-տեան ընկերութեան» Այդ գրքերն են՝ Աս-տուածաշունչ, Մատենադարան մանկանց, Աւ-ղեցոյց Աստուածաբանութեան, Պատմութիւն երկրի Տարոնայ, Դուռն իմաստութեան, Յիսուս Որդի, Սմբատ և Վահրամ, Ստեփաննոս Օրբե-լեան, Արշաւանք Արարացոյց ի Հայաստան, Նա-ղիկ Գիտութեան, Եղիշէ, Պօղոս և Վերդինիա, և Հանդէս Հայախոսութեան:

ԹԻՖԼԻՍԻՍ ուստաց թատրոնական բեմը այս օրերս դուրս եկաւ կրկին մի նոր դերասանուհի, տ. Ն. Եմիր օվ-րալի: Այդ տաղանդաւոր դե-րասանուհին առաջին անգամ մեր բեմի վրա իր դերուտ արաւ Ալէքսանդր Գիւմայի «La dame aux camelias» բօմանից վերցրած պիէսայում, որի նիւթը վերցրած է «Traviata» օպերայի համար: Երկրորդ անգամ մենք տեսանք Նեմի-րօվ-Բալֆ տիկնոջ «Чужое имя» պիէսայում: Երկու պիէսաներում, երկու բոլորովին տար-բեր դերերումն էլ տիկինը անմասն էր: Թատրոնը լի էր և ամբողջ հասարակութիւնը ուսանելից էր բաղկացած, Միայն տեղ տեղ երևում էին տեղացիները, այն էլ աստիճանաւորների դա-սից: Մենք համոզված ենք որ ուստաց թատրո-նին զուգընթաց կարող էր գոյութիւն ունենալ Թիֆլիսում և տեղական, հայոց-վրաց թատրոնը: Պարզ երևում է, որ ուստաց թատրոնը, որքան էլ լաւ է ներ չէ գտնուում տեղացի բազմութիւնը: և նշանակված:

Մեր Ա.Ս.Ա.ԲԱՄԱԳԻ թղթակիցը գրում է մեզ հետեւեալը: «Այս օրերս մեր քաղաքի մօտ գտն-ված մի գիւղում մի սարսափելի եղեռնագործու-թիւն է պատահել: Մի 18 տարեկան երիտա-նորդ մի իննամեայ տղջկայ է հանդիպում դաշ-տի վրա և բռնաբարում է նրան: Երեսուն հի-ւանդ պառկած է այժմ, Այդ մասին քննութիւն է նշանակված:

Մեզ հաղորդում են ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ հետե-ւեալը: «Խորէն Վ. Ստեփանէ օգոստոսի 31-ին հասաւ Ս. Էջմիածին և հետեւեալ օրը այցելու-թիւն գնաց բոլոր հայերին, լսում ենք որ հայր սուրբը ուստից է նշանակված ձեմարանում: Այժմ նա գնացած է Բիւրական վեհափառն տեսութիւն: ձեմարանում այժմ առաջին գեր խաղացողը հայր Բաւաթանն է, երևի երկրորդը Ստեփանէն կը լինի:»

ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ մեզ գրում են, որ սեպ-տեմբերի սկզբներում այնտեղ չըբեր անցան և այժմ սկսվեցաւ հով եղանակը: Գիշերները մի-չև անգամ ցուրտ է լինում, ասում է թղթակիցը:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ մեզ գրում են: «Շատ օրեր չէ անցած որ երևանում հրապարակի վրա սպա-նութիւն է պատահել: Այժմ կրկնվել է նոյնը և վաղարշապատում: Այս օրերս երեկոյեան 9 ժամին անցայտ շարագործի ձեռքով սպանվեցաւ այստեղ ամենքին յայտնի մի քաջ երիտասարդ, Անցաւ երեք օր, և յանկարծ լսեցինք որ Ոչա-կան գիւղումն էլ տեղացիներից մինը իր այգիի մէջ սպանված գտնվեցաւ: Զարագործը նոյնպէս անցայտ է:»

Սեպտեմբերի 10-ին կատարվեցաւ ԹԻՖԼԻՍԻՍ սուրբ Գայեանեան ուսումնարանի իննորդ տա-րեգարձը: Մոլորու սուրբ Գեորգ եկեղեցու մէջ

պատարագին ներկայ լինելուց յետոյ ուսումնա-րանի աշակերտուհիները, վարժուհիները, ուսու-ցիչները և տոմսակներով հրաւիրված հասարա-կութիւնը գնացին ուսումնարանի նոր դահլիճը, որտեղ մի քանի ճառեր կարդացվեցին, իսկ միւս սենեակում օրիորդները շատ գեղեցիկ եր-գում էին: Առաջին ճառով հայր Սուրբանդեանը ուսումնարանի համառօտ պատմութիւնը կար-դաց: Այդ ճառի նշանաւոր մասը վերաբերվում էր պատուելի հօր ուսումնարանին մատուցած ծառայութիւններին: Երկրորդ ատենաբանը ու-սումնարանի տեսուչ պ. Աբխաթով Յովհաննի-սեանն էր, որ հասարակութեանը ներկայացրեց մի պարզ հայեւ ուսումնական մասի, իսկ պ. Սուրբանը, որ ուսումնարանի գանձապահ է, տնտեսական մասի հայեւ տեսուչ: Հանդէսը վեր-ջացաւ սրբազան Գաբրիէլ Այվազովսկու մի քա-նի ազդու խօսքերով: Այդ օրը կար նոյնպէս վիճակաւաղ յօդուտ ուսումնարանի: Օրվայ հե-րոսներն էին պ. պ. Բօտիկեանները, որոնք ու-սումնարանի շինութիւնը ընդարձակել են: Խա-քանչիւր ճառի մէջ նոցա անունները յիշվում էին: Գայեանեան ուսումնարանը Թիֆլիսի հա-մար մի հազադիւտ հիմնարկութիւն է, դրա նմանը մենք Թիֆլիսում ոչ մէկը չենք ճանաչում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Սեպտեմբերի 9-ին ալբուսական պալատի սպիտակ դահլիճում կատարվեցաւ գերմանա-կան պարլամենտի բացման հանդէսը: Այդ հանդիսին հաւաքվել էին պարլամենտի մօտ 60 պահպանողական և մի քանի ազատամիտ անդամներ: Միւս կուսակցութեան ներկայա-ցուցիչները չը կային: Ժողովը հաւաքվեցաւ դահլի շուրջը, որի վրա փռված էր կարմիր-ծածկոց: Միացեալ խորհուրդի հաւատար-մատարները մօտս դահլիճը ժամի երկուսին Պարլամենտի ամենահին անգամ Փօն-Բօնին երեք անգամ կանգնեց «hoch» ի պատիւ գերմա-նական կայսրի: Միացեալ խորհրդի հաւա-տարմատարները կանգնեցին դահլի ձախ կողմը, դահլի մօտ կանգնեց կայսերական կանցլէրին փոխարինող կոմս Օտտօ-ցու-Շտոյլբերգ: Կոմս Շտոյլբերգ կարդաց հեռեւեալ դահլական ծա-ռը:

«Պատուելի պարոններ, բարձրագոյն յանձ-նարարութեամբ նորին կայսերական բարձու-թիւն Գերմանիայի և Պրուսիայի թագաժա-ռանգը բարհաճեց հաւատալ ինձ միացեալ կառավարութիւնների անունով բաց անել պարլամենտի նիստերը: Պարլամենտի վերջին նիստերը փակելուց յետոյ գերմանական Ժո-ղովուրդը գտնվում էր խոր յուզմունքի տալա-ւորութեան տակ, որի պատճառը նորին կայ-սերական մեծութեան կեանքին ձեռնամուխ լինելն էր: Մի քանի օրից յետոյ շարագործի ձեռքը նորից և աւելի վատ հեռեւեաններով բարձրացաւ կայսերութեան պիտի վրա: Աս-տուծու ողորմութիւնը ճշմարիտ է այս ան-գամն էլ պահանջեց կայսրի կեանքը, բայց ստացած ծանր վէրքերը ստիպեցին նորին մեծութեանը հեռու մնալ կառավարական գործերի մասնակցութիւնից և մինչև առողջա-նայը գործերի վրա հարկաւոր եղած հսկո-կողութիւնը յանձնել նորին կայսերական բարձրութեան թագաժառանգին: Կայսեր սպանմանը դեռ առաջին անգամ ձեռնամուխ լինելը համոզեցին միացեալ կառավարութիւն-ներին, որ շարագործութիւնը կատարված է այն վարդապետութիւնների ազդեցութեան տակ, որոնք ծնված են և պահպանվում են ազգի բազմութիւն շրջաններում և որոնց նպա-տակն է հիմնայտաւ անել պետական և հա-սարակական ներկայ կազմակերպութիւնը: Այդ պատճառով միացեալ կառավարութիւնները ներկայացրին պարլամենտին օրէնքի նախա-դիճ, որի նպատակն է սահմանափակել պե-տութեան համար այդ վտանգաւոր ձգտումն ներքև նախագիծը մերժելը: Այժմ, երբ նոր

չարագործութիւնը անհրաժեշտ է ցայտուից ազդել իր կայսրութեանը և հասարակութեանը սպառնալիքները, դուրս, պատուելի պարտնէր, որ կոչված է օրէնսդրութեանը մասնակցելու համար, պէտք է քննէ՝ հետևեալ հարցերը. այժմեան իրաւասութիւնը տալիս է արդեօք բաւական ապահովութիւն յիշեալ ձգտումները անվնաս անելու համար: Միացեալ կառավարութիւնները իրանց համադրմունքները չեն փոխել:

Ընդհանուր առաջնայ պէս այն կարծիքն է, որ արմատացած չարիքի առաջն առնելու համար ծայրայեղ միջոցներ են հարկաւոր: Նոքա նոյնպէս այն կարծիքն է, որ ընտրելի միջոցները պէտք է պահպանեն քաղաքական ազատութիւնը առհասարակ և ընդդիմադրեան այն ղեղձումներին, որոնցով վնասակար վարչապետութիւնը սպառնում է մեր պետական և կուլտուրական կեանքի հիմունքներին: Այս տեսակետերի ազդեցութեան տակ կազմած օրէնքի նախագիծը ձեռնարկելու կը ներկայացնուի: Միացեալ կառավարութիւնները համադրած են, որ ազգի նորընտիր ներկայացուցիչները չեն բացառի այն միջոցները, որոնք անհրաժեշտ են կայսրութեան ներքին զարգացման և ինչպէս ներքին նոյնպէս էլ արտաքին յարաբերութիւնները ընդդիմադրելու համար: Նոքա յոյս ունեն, որ եթէ վերջ կը դնուի վնասակար վարչապետութեան տարածմանը, միջոցները հեշտութեամբ կ'ազդուի ճշմարիտ ծանապարհի վերաբարձնել: Բարձրագոյն հրամանով միացեալ կառավարութիւնները անուամբ պարտաւնաւոր բացված եմ յայտնում:

Ժողովը գահական ճառի ընթերցանութիւնը լսեց հանդիսաւոր լուսնութեամբ: Նրբ կոմիտեի քննարկումը պարտաւնաւոր բացված յայտնեց, Բախարայի հասարակական, դեպքի Բուրգարտի պատու կայսրի կանչեց «hoocho», որ ժողովը ոգևորութեամբ կրկնեց երեք անգամ:

Պարտաւնաւոր բացվելուց յետոյ խիղջն առաջին նիստը ունեցաւ:

ԱՄՍՏՐՈՒՆԳԱՐԻԱ

«Голосъ» լրագրի թղթակիցը գրում է հետևեալը Բուրգ-Պիտից:

«Վոմն Անդրաշին ողորմելի է դառնում: Նրան այլ ևս ոչինչ չէ աջակցում: Վոմն փորձեց թիւրքիայի հետ դաշնագրութիւն կապել, այդ նրան չաջակցեց: Ունգարիան համակրութեամբ ընդունեց դաշնագրութեան միտքը, բայց Աւստրիան չը կամեցաւ: Վոմն փորձեց ուշադրութիւն չը դարձնել գերմանացիների աղաղակների վրա և աւստրո-թիւրքաց դաշնագրութեան հարցը դարձրեց միևնույն ժամանակ հարց և հրաժարական տուեց, դարձեալ չաջակցեց, կայսրը չընդունեց նրա հրաժարականը, պատճառ բերելով, որ նա իբրև սահմանադրական թագաւոր չէ կարող ընդունել այնպիսի միևնույն հրաժարականը, որին պաշտպանում են երկու պարլամենտները: Վոմն Անդրաշին չէր կարող հաստատ պահանջել իր հրաժարականի ընդունելը, որովհետև կայսրը նրան կարճաժամ պատասխան տուեց և դուրս եկաւ Վիեննայից, բացի այդ աւստրիական առաջին միևնույն էլ սրտից չէր ցանկանում իր հրաժարականի ընդունելը, այլ կամենում էր միայն վախճանել ում հարկն է, բայց իր նպատակին չը հասաւ: Դաշնագրութիւն կապելու միտքը բոլորովն թողնելը, Բ. Դրանը մի շրջաբերական ուղարկելը, իսկ հարկաւոր դէպքում պատերազմ յայտնելը, կը նշանակէր կատարել իր թշնամիների ցանկութիւնը, որոնք սպասում են, որ ատելի ունգարացիներ իր հայրենակիցների ձեռքով իշխանութեանը զբաղեն: Հարաբերութիւնները և ամբողջ Աւստրիան սաստիկ վախճանում են Ունգարիայի յեղափոխութեանը և իրանք չեն ստիպի իրանց

համար անտանելի կոմն Անդրաշին թողնել պաշտօնը, որովհետև նրանց այդպիսի վարքը ունգարացիներին կը կատարեցնէ:

«Վոմն Անդրաշին այս բոլորը լուս հասկանում է և ամբողջ մնում է իր տեղը: Հաստատ համոզված լինելով իր պետական նշանաւոր ընդունակութիւններին մէջ, նա երկարապարհ է, որ ունգարականութիւնը կը կորչի այն օրվանից, երբ ինքն կը թողնէ պետական կանցլերի տեղը: Գլխաւորապէս նրան ներգայնում է այն միտքը, որ իրան գոցե մի սլավոն կը փոխարինէ: Այս հանգամանքը նա Ունգարիայի համար կորստաբեր է համարում: Իսկ այս դէպքի կարեւորութիւնը նա եզրակացնում է այն հանգամանքից, որ կայսր Ֆրանց-Յովսեփը ընդգէմ չէ զօրեղանակ սլավոնների տարրը: Թրինակ Բոսնիայի և Հերցեգովինայի գրաւելը կայսրի անձնական ցանկութիւնն էր: Այդ նպատակին հասնելու համար Ֆրանց-Յովսեփը քիչ էր մնում: Դաշնագրութիւն կապել անտանելի Ռուսաստանի հետ, բայց Անդրաշին և ունգարացիներին աջակցեալ խանգարել կայսրի դիտաւորութիւնը:

«Վոմն Անդրաշին կամեցաւ պատերազմ յայտնել թիւրքիային: Այսպիսի քայլ անելու համար հարկաւոր է զրգուել ունգարացիներին թիւրքիայի դէմ: Այս պատճառով Վիեննայի պաշտօնական լրագրիներին մէջ տպվեցան հեռագրիներ մի շարք, որոնց ուղարկել էր աւստրիական հրապարտար Սերաֆիմով: Կոմն Անդրաշին վերջին երեք ամիսների ընթացքում Հիւպատոս պ. Վասիլ չէր հեռագրիներին մէջ ասում է, որ Բ. Դուրը ոչ թէ միայն չէր արգելում ապստամբութեան ծագելը, այլ ընդհակառակը գրգռում էր ապստամբներին օգնութիւն խոստանալով: Բացի այս Դուրը ուղարկեց Բոսնիա և Հերցեգովինա այնպիսի զօրքեր, որոնք հաւաքված էին տեղական բնակիչներից, ի նկատի ունենալով, որ դոքա չեն ընդդիմանայ իրանց հայրենակիցներին և չեն աշխատի ձեռք ապստամբութիւնը, այլ ընդհակառակը կը միանան ապստամբների հետ:

«Հիւպատոսի ուղարկած այսպիսի բովանդակութիւն ունեցող հեռագրիներ տպվեցին ի հարկէ կոմն Անդրաշին ցանկութեան համեմատ, բայց նոքա չը հասան այն նպատակին, որ կամենում էր Աւստրո-Ունգարիայի առաջին միևնույն: Ունգարացիների անբաւականութիւնը Բ. Դուրից աւելացաւ, բայց բոլորովն չը ծագեց ատելութիւն դէպի թիւրքերը: Վերջապէս ի՞նչ ատելութիւն կամ ի՞նչ սէր կարող է լինել թիւրքերի և ունգարացիների մէջ: Ունգարացիները երբէք չեն սիրել թիւրքերին և երբէք չեն հաւատացել այդ երկու ազգութիւնների եղբայրութեանը, որի մասին անցեալ տարի ունգարացիները բղաւում էին: Նոքա բոլորը ծաղրում էին թիւրքերին և կիսակիրթ ունգարացիներ անգամ թիւրքերի վայրենի, բարբարոս է համարում: Ունգարացի քաղաքագետները իրանք հասկացել են ժողովրդին, որ թիւրքիայի ամբողջութեան պահպանվելուց կախում ունի Ունգարիայի գոյութիւնը, իսկ ունգարացիները սովորել են հաւատալ իրանց առաջնորդներին, որոնց թիւրք այդ երկրում մեծ է: Թիւրքերի և ունգարացիների համեմատութեան համար ոչինչ պատմական պատճառներ չը կան:

Ինչպէս երևում է այս թղթակցութիւնը գրված է մի սլավոնից, որ նոյնպէս ասում է ունգարացիներին և դրանց թիւրք կոմն Անդրաշին, ինչպէս ունգարացիները ասում են սլավոններին: Միւս լրագրիների թղթակցութիւններից չէ երևում, որ կոմն Անդրաշին այդպիսի կրիտիկական դրութեան մէջ լինէր: Անդրաշին հրաժարական տալու և այդ հրաժարականի կայսրից չընդունվելու մասին հեռագրերը մեզ ոչինչ չէ հա-

ղորդել և միւս լրագրիներում չը կան պաշտօնական տեղեկութիւններ: Երևում է, որ ունգարացի սլավոն թղթակիցը չէ կարող ներել աւստրիական առաջին միևնույն այն աջակցութիւնները, որ նա ունեցաւ Բերլին կոնգրեսում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Polit. Corresp.» լրագրի հաղորդում է, որ Մանիէ-Ալի-փաշայի սպանումն շատ ծանր տպաւորութիւն գործեց Բ. Դրան վրա: Ասում են, որ թիւրքաց կառավարութիւնը մեծ պատրաստութիւններ է տեսնում Ալբանիայի ապստամբների դէմ գործելու նպատակով: Երևում է, որ զօրքեր կուղարկվեն Մակեդոնիա, որի բնակիչները նոյնպէս հակված են դէպի ապստամբութիւն:

«Բէյութերի ընկերութեանը» հեռագրում են Կ. Պոլսից, որ Արեւելեան Բուլղարիայի սահմանները որոշող մասնաժողովը կը հաւաքվի Ֆիլիպպոլում: Դիտաւորութիւն սկզբին, Կ. Պոլսում ստացվում են անհանգստացնող լուրեր Արեւելեան Բուլղարիայում տեսնվող պատրաստութիւնների մասին: Այդտեղի ազգաբնակչութիւնը կամենում է միանալ Բուլղարիայի հետ:

«Բէյութերի ընկերութեանը» Կ. Պոլսից հեռագրում են, որ պետութիւններից ոչ մէկը դեռ չէ պատասխանել Բ. Դրան շրջաբերականին թիւրք-յուսէան սահմանների ուղղելու վերաբերութեամբ: Կ. Պոլսում կարծում են, որ ոչ մի պետութիւն պատասխան չի ուղարկել, մինչև տեղեկութիւնների մէջ մտքերի փոխարինութիւն չը կատարվի:

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՈՒՆԱՐԱՒԱՐԻՑ մեզ գրում են՝ «Սրանից մի քանի օր առաջ գալիս է ինձ մօտ մի հայ կաթողիկ երիտասարդ և ասում է թէ մի նշանաւոր բան ունի «Մշակին» հաղորդելու: Ի՞նչ է քո նշանաւոր հաղորդութիւնը, հարցրի ես: Նա սկսեց խորհրդաւոր կերպով պատմել ինձ հետևեալը: «Մեր գիւղում կայ մի քանայայ, որ քարոզում է թէ մեռած մարդկանց հոգիները մի առանձին տեղում պէտք է սպասեն մինչև վերջին դատաստանը»: Եւ զու կարծում եմ, ընդմիջեցի նրան, թէ «Մշակը» կը տպի այդ տեսակ յիմարաբանութիւններ, առաջարկում եմ քեզ դիմել «Քննութիւն խնդրոց» և այլ դրա նման գրքերին, գոցե՛ք այդ իմաստուն գրքերում կարողանաւ քաղաքութիւն գտնել քո ցանկացած խնդիրներին, Մինչև որ մեր մտքերը, աւելացրի ես զեզոված կը լինեն միմյալից կրօնական հարցերով, մեր ազգը երբէք մի քայլ չի անի դէպի առաջ: Այդ խօսքերը լսելով, երիտասարդը անբաւական դուրս գնաց իմ մօտից: Այդ, կրօնական խնդիրները մի կողմից, իսկ միւս կողմից այն խտրութիւնը որ դրվում է մեր ազգի անդամների մէջ («հայ-կաթողիկ»), («հայ-բողոքական») և («հայ-լուսաւորչական») անուններով, որոնցով ատելութիւն է սերմանվում մի և նոյն ազգութեան անդամներին մէջ, միշտ արգելք կը լինեն ազգի կանոնաւոր զարգացման, նրա ճշմարիտ լուսաւորութեան և նորա առաջադիմութեան: Ինչպէս տեսնում էք, մեր կաթողիկ եղբայրները, կուրացած իրանց կրօնական խնդիրներով և ֆանատիկութեամբ, մինչև այժմ չը կարողացան ըմբռնել «Մշակի» ուղղութիւնը:»

Հինգշաբթի օրը սեպտեմբերի 14-ին, Արթուրն աչգիւում թի՛ՖԼԻՍԻ թատրոնի օրկեստրի մի քանի երաժիշտները և մի քանի սիրողները տալու են երաժշտական երեկոյ: Սկիզբը 8 ժամին: Մուտքը պարտնեւոր համար 1 ր. կանանց համար 50 կօպ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

1.05.70, 7/19 սեպտեմբերի: Բօմբէից հեռագրում են որ Հնդկաստանի կառավարութեան դեսպան Գլաւ Լուսէյն հասաւ Կա-

բուլ օգոստոսի 29 (սեպտեմբերի 10-ին): Համակրութեամբ ընդունվելով նա յանձնեց էմիրին Հնդկաստանի փոխարքայի նամակը: Աֆիմուսվելում ժամից ժամ սպասում են Միր-Ակբարին, որ պէտք է բերէ էմիրի պատասխանը անգլիական դեսպանութեան վերաբերութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 սեպտեմբերի: Կովկասեան զինուորական-մեծակային խորհուրդի անդամ Վաստինին շնորհված է Սպիտակ Առիւծի շքանշանը: Եզուց կը լինի Պրեօբրա-ժենցիների և Սեմիոնովիների ընդունելութիւնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 սեպտեմբերի: Պետական բանկի 50% տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ր. 87 կ., երկրորդ 95 ր. 87 կ., երրորդ 95 ր. 50 կ., չորրորդ 95 ր. 50 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 233 ր. 50 կ., երկրորդ 229 ր., արեւելեան 92 ր. 62 կ., ոսկի 8 ր. 1 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24²³/₃₂ պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 211,25 մարկ, Փարիզի վրա 260 ֆրանկ: Տրամադրութիւնը ամուր է:

ՎԻԵՆՆԱ, 7/19 սեպտեմբերի: Բիխաշ ամբողջ անձնատուր եղաւ աւստրիական զօրքերին: Վերցրած են հինգ թնդանօթներ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 սեպտեմբերի: Այսօր մասն քաղաքը Պրեօբորժեանի, Պաւլովսկի և Սեմիոնովսկի գունդերը: Ընդունելութիւնը շատ փառաւոր էր: Ծանապարհի վրա յաղթողների գլխին թափում էին ծաղիկների փունջեր, պատկերներ, պապիրոսների և կոնֆէտների արկղիկներ:

1.05.70, 9/21 սեպտեմբերի: «Times» լրագիրը հաղորդում է, որ Ռուսաստանը Բ. Դրան հետ բանակցութիւններ սկսեց Սան-Ստեֆանոյի դաշնագրի այն կետերին, որոնք վերաբերվում են բացառապէս Ռուսաստանին և թիւրքիային և որոնց Բերլինի դաշնագիրը անփոփոխ է թողել: Վերջնական ձևակերպութիւն տալու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 սեպտեմբերի: «Правда. Бѣтъ» լրագիրը հաղորդում է հետևեալը. «Թիֆլիսի դատաստանական պալատի անդամ պ. Վիտովսկուն հրամայած է վարել Վարդիկավկասի նահանգական դատարանի նախագահի պաշտօնը: Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահ իշխան Զալչալաձէին հրամայած է վարել Թիֆլիսի դատաստանական պալատի գեպարտամենտի նախագահի պաշտօնը:

ՎԻԵՆՆԱ, 9/21 սեպտեմբերի: «Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է. «Երեկ սկսվեց ռուսաց զիւրքերի դատարկվելը Կ. Պոլսի մօտ: Գնեկալ Սկօբելովը զօրաբաժնիւր երէկ ուղեւորվեց Ատայաշ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 սեպտեմբերի: «Правда. Бѣтъ» լրագրի մէջ տպված է գնեկալ Տօւլէբէի Սան-Ստեֆանոյից Թագաւոր Կայսրին ուղարկված հետեւեալ հեռագիրը. «Զօրեքաբթի երկուշաբթի ես հասայ Ադրիանօպօլ: Ինձ դիմաւորեցին մահմետական, յուսնաց, բողոքացոց, հայոց և հրէից հոգեւորականութիւնները: Ամենքը խնդրում էին արկանել Ձեր ոտքերին նրանց անսահման շնորհակալութեան արտայայտութիւնը ռուսաց իշխանութեան կողմից նրանց տուած հովանաւորութեան համար: Հաստատում եմ, որ երբէք Ադրիանօպօլում չէ եղել այնպիսի կարգ և ճշգրտութիւն, ինչպէս մեր զօրքերի այնտեղ գտնվելու ժամանակ, որոնք իրանց օրինակելի կերպով էին պահում: Քաղաքը լուսաւորված էր: Բոլոր մզկիթները և քաղաքի դռները վրա երևում էին Ձեր Մեծութեան պատկերով զարդարած վիզկէները: Բոլոր ազգաբնակչութիւնը ոտքի վրա էր:

